

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ, ԹԱՄԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ,
ԱՆՈՏ ԳԱԼՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ



ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴԴՐՈՑԻ
5-րդ ԴԱՄԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐԸ



ԷԴԻՏ ԴՐԻՆՏ
Իրանագրական կենտրոն
ԵՐԵՎԱՆ 2011

Մեր լեզուն



Բանաստեղծները հայերենն անվանում են «արքայական», «ճկուն», «արևահամ», «քաղցրաբառ»...

Մանուկներն արտասանում են. Սիրում են քեզ, հայո՛ց լեզու, Մայրիկիս պես անուշ ես դու:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է, որ հայերենը մեր երկրի պետական լեզուն է:

Գիտնականներն ասում են, որ հայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից է և 4 հազար տարվա պատմություն ունի:

Իսկ ի՞նչ ես մտածում դու, հայերենն ի՞նչ է քեզ համար, այն ի՞նչ դեր ունի մեր երկրում:



Մտածե՛լ ես, թե ինչո՛ւ ենք մեր լեզուն կոչում մայրենի:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՄԻԿՅԱՆ

(1919-2006)

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես
Սիրող թո մոր խո՛սքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Յայոց լեզո՛ւն հազարազանձ:
Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Ծառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի,
Եվ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր՝ անաղարտ...
Նրանով է մրմնջացել
Յայ պանդուխտը վերջն իր սրտի,
Նրան՛վ է որոտացել
Կռվի երգն իմ ժողովրդի,
Նրանով է մայրս ջահե՛լ
Ինձ օրորոց դրել մի օր,
Յիմա եկել, քե՛զ է հասել
Նրա կարկաչը դարավոր...
Բա՛ց շուրթերո, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ թո շուրթերին
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն...
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ճյուղի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ,
Զո պապերի աճյունի պես,
Ու ոտխի գարկիցը սև



3. Երբ կարդում էիր բանաստեղծությունը, ի՞նչ պատկեր էր գծագրվում աչքերիդ առջև:
4. Գտի՞ր բանաստեղծության հիմնական միտքն արտահայտող բառը կամ բառերը:
5. Բանաստեղծուհին ինչո՞ւ է այդպիսի խիստ պատգամ տալիս: Գտի՞ր ու կարդա՛ այդ տողերը և բացատրի՛ր:
6. Ի՞նչ ես կարծում, հնարավո՞ր է, որ մարդ մոռանա իր մորը:
7. Քո ծնողները, պապիկդ կամ տատիկդ քեզ որևէ կարևոր բան հանձնարարո՞ւմ են. պատմի՛ր այդ մասին (եթե դա, իհարկե, ընտանեկան գաղտնիք չէ):



«Խոսք իմ որդուն» բանաստեղծությունից քեզ դուր եկած տողը (կամ տողերը) ընտրի՛ր, կարդա՛ և ասա՛, թե քանի՞ բառից է կազմված: Իսկ բառե՞րն ինչից են կազմված:

ՅԼՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Մարդիկ մշտապես իրար մի բան են ասում, պատմում, հարցնում, այսինքն՝ հաղորդակցվում են: Այդ հաղորդակցությունն իրականանում է գրավոր և բանավոր խոսքի միջոցով:



Խոսքը կազմվում է նախադասություններից, նախադասությունները՝ բառերից, իսկ բառերը՝ հնչյուններից: Հնչյունը լեզվի արտասանական նվազագույն միավորն է: Հնչյունը այնպիսի ձայն է, որից բառ կամ խոսք է կազմվում: Դրանով էլ հենց տարբերվում է բնության տարբեր ձայներից:

Բանավոր հաղորդակցությունը տեղի է ունենում ասելու և լսելու միջոցով, իսկ գրավոր խոսքը՝ գրելու և կարդալու: Գրելու միջոց են տառերը: Տառը հնչյունի գրային նշանն է:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ բառով են անվանում հետևյալ ձայները:

Նմուշ՝ ձիու ձայնը - վրնջյուն , խրխինջ :

ա) զանգի, բ) դռան, գ) գետակի կամ առվակի, դ) ամպերի,

ե) չորացած տերևների , գ) շենքի փլուզման , ե) ջրվեժի , ը) ջուրն ընկնող առարկաների , թ) կանաչ տերևների :

2. Պայմանական ի՞նչ նշաններ գիտես, թվարկի՞ր: Եթե կարող ես, նկարի՞ր կամ ցո՛ւյց տուր:

3. Փորձի՞ր բացատրել թո դասագրքի պայմանական նշանները:

4. Մարդկանց որևէ բան հաղորդելու ի՞նչ միջոցներ կարող ես թվարկել:

5. Քո բարբառում կա՞ որևէ հնչյուն, որը չկա գրական լեզվում:

6. Բայերենում ի՞նչ հնչյուններ կան, որոնք չկան թո իմացած օտար լեզվում: Բակառակը կա՞:



Ի՞նչ ասույթներ կամ բանաստեղծություններ ես կարողացել մայրենի լեզվի մասին: Դրանցից մեկ-երկուսը գտի՞ր և գրառի՞ր:

Իսկ հիմա կարդա՛ և անգի՞ր սովորիր:

ՆԱԻՐԻ ՉԱՐՅԱՆ

(1900-1969)

ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒՆ

Արի՛, եղբա՛յր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն:

Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,
Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ՝ հայոց լեզուն:

Նա առաջին կանչն է եղել **դյուցազնական** մեր նախահոր,
Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն:

Քերթողահայր՝ Խորենացուց մինչև Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երազ ու երգ և ճանապարհ՝ հայոց լեզուն:

Կմուղովեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կկորչեինք, եթե ճամփին չբոցկտար հայոց լեզուն:

Ուրեմն ե՛կ փառաբանենք, փայլեցնենք թրի նման,
Որ զրնգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն:

